«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը.

Դաստիարակ՝ Դեմուրչյան Անի

Մանկապարտեզ՝«Երևանի 127 մսուր -Մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն …….……..……..……..…….3
Գլուխ 1
Նախադպրոցականի ինքնուրույնության ու նախաձեռնողականության զարգացման եղանակներն ու մեթոդները……..……..……6
Գլուխ 2
Ստեղծագործական և դիդակտիկ խաղերը՝ավագ նախադպրոցականի ավագ նախադպրոցականի հաղորդակցման կարողությունների և ստեղծագործական ունակությունների զարգացման միջոցով……..……..……..13
Գործնական համատեքստ ……..……..……..……..18
Եզրակացություն ……..……..……..……..……21
Օգտագործված գրականության ցանկ ……..……..……..22

Ներածություն

Ժամանակակից կրթական համակարգին խնդիրներից և արժեքային կողմնորոշումներից մեկն է աշակերտների մեջ ինքնուրույնության և ստեղծագործական և ունակությունների ձևավորումը ու զարգացումը։Այս վորակները օգնում են անձին հետագայում ինքնադրսևորվել կյանքի բոլոր բնագավառներում։Երեխաները այս որակներո շնորհիվ զարգացնում են իրենց ճանաչողական կարողությունները և հմտությունները։Ինչպես հայտնի է աշխարհաճանաչողությունը սկսվում է ընտանիքում։Երեխան փորձում է ամեն կերպ բավարարել սեփական հետաքրքրությունները՝անողղակի կերպով կուտակելով նոր հմտություններ և կարողություններ։

Նախադպրոցական երեխայի կրթման և դաստիարակման համակարգի կենտրոնում են երեխայի անկատականության կարևորումը առանց կոնֆլիկտների և անվտանգ պայմաններ ապահովելու սաների զարգացման և բնական ներուժի իրացման համար։

Մանկապարտեզում անկրաժեշտ է ստեղծել այնպիսի միջավայր ,որտեզ կզարգանան երեխաների դեռևս նոր ձեռք բերած անձնային հատկանիշները՝ինքնուրույնակության,ինչ-որ նոր բան սովորելու հակում,Հետաքրքրիություն,որելլ պետք է հիմք հանդիսանա երեխայո ,եսի՝ կետագա ամրացմանն ու կայունացմանը։ Այս տարիքից պետք է ակտիվորեն զարգացնել երեխայի ստեղծագործական ունակությունը,երևակայությունը,ուշադրությունը ու տրամաբանական մտածողությունը։Մանկապարտեզի տարիքում երեխաները հիմմականում ընկալում են զգայարանների միջոցով,ուստի կարելի է կազմակերպել այնպիսի խաղեր որոնք, կլինեն տեսողական,զգայական,գիտակից,նախաձեռնող երեխա առանձնանում է բովանդակալից հետաճրքրություններով։Նախաձեռնությունը դրսևորվում է բոլոր տեսակի գործունեության մեջ,ոայց առավել կստակ՝խաղում։

Երեխայի անձի ձևավորման և զարգացման մեջ էական նշանակություն ունեն խոսքի և հաղորդակցության զարգացումը,ինքնուրույն խնտիրների հաղթահարումը սեփական նախաձեռնություններով հանդես գալը։

Հասարակության մեջ իր տեղը գտնելու համար երեխան պետք է արդյունավետ հաղորդակցվել սովորի։Նախադպրոցական տարիքի երեխան խոսել սովորելով՝ նախ շփվում է իր ծնողների հետ այնուհետև այլ մարդկանց հետ,սովորում է հաղորդակցվել համատեղ գործունեության ընթացքում։Այդ համատեղ գործունեությունը կարող է լինել խաղուսում և իր ուժերի չափով աշխատանք։Որքան կարգապահ ու ակտիվ է երեխան այնքան ավելի լավ է տիրապետում վարքի կանոններին,և ավելի լավ է կարողանում դրսևորել իր դրսևորությունը։Այս հետազոտական աշխատանքում հատկապետ կարևոր են նախադպրոցականի ինքնուրույնության,ստեղծագործականության և նախաձեռնողականության խթանման անհրաժեշտությունը։

Հետազոտական աշխատանքի արդիականությունը այս թեման արդիական է,քանի որ միջավայրը նախադպրոցականի երեխան անց է կացնում օրվա մեծ մասը, անընդհատ փոխվում է։

Հետևաբար դաստիարակի պետք է երեխային օգնի նախ սովորել ինքնուրույն լուծել,ստեղծել սոցիալական կապերը՝օգտագործել ժամամակակից դիդակտիկ տեխնոլոգիաները՝զարգացնելու ունակությունը տեսական գիտելիքները գործնական կարողություններ վերածելու համար։

Աշխատանքի նպատակը

Ուսումնասիրել նախադպրոցականների ինքնուրույնության նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների դրսևորությունները,զարգացման աստիճանը,հնարավոր դժվարությունները այդ համատեքստում։

Աշխատանքի խնդիրները

- Բացահայտել նախադպրոցականների սոցիալականացման ու զարգացման մեթոդական հիմքերը համատեղ գործունեության ընթացքում։
- Բնութագրել մանկապարտեզ հաճախած նախադպրոցականի տարիքի երեխայի ինքնուրույնության ստեղծագործականության հմտությունները

- Գործնական մասում շեշտը դնել նախադպրոցականի երեխաների սոցիալականացման հաղորդակցման ունակությունների զարգացման,ինքնուրույնության
- նախաձեռնողականության ,ստեղծագործական ունակությունների խթանման ուղիները խաղային տեխնոլոգիաների օգնությամբ

Աշխատանքի կառուցվածքը Սյուն հետազոտական աշխատանքը կազնված է ներածությունից երկու տեսական և մեկ գործնական ենթագլուխներից եզրակացությունից և գրականության ցանկից։

Գլուխ 1

Նախադպրոցականի ինքնուրույնության ու նախաձեռնողականության զարգացման եղանակներն ու մեթոդները

Նախադպրոցական տարիքում տարիքը, մանկավարժների եւ հոգեբանների կարծիքով, առավել կարեւոր է երեխաների մեջ տարբեր որակների եւ հատկությունների զարգացման համար, որոնց օգնությամբ նրանք կկարողանան դրսեւորել հետագա կյանքում, կենսագործունեության տարբեր ոլորտներում: Այդպիսի որակներից են ստեղխագործական ակտիվությունը, ինքնուրույնությունը, վստահությունը, պատասխանատվության զգացումը, համառությունը եւ այլն: Այս տարիքում երեխայի կայացման կարեւոր ուղղություններից է ինքնուրույնության զարգացումը, որը մեծապես որոշում է երեխայի հաջող գործունեությունը հետագա կյանքում:

Ինքնուրույնությունը ձեւավորվում է աստիճանաբար՝ երեխայի յուրաքանչյուր տարիքային փուլում, ընդ որում յուրաքանչյուր տարիքում այն ունի տարբեր հատկություններ եւ դրսեւորման ձեւեր: Միեւնույն ժամանակ, յուրաքանչյուր տարիքային փուլում անհրաժեշտ է, որպեսզի երեխաների ինքնուրույնության ձգտումը խրախուսվի մեծերի կողմից համապատասխան չափաբաժիններով եւ ռացիոնալ կերպով՝ զարգացնելով անհրաժեշտ հմտություններ եւ կարողություններ երեխաների մեջ:

Ինքնուրույնությունը սերտորեն կապված է այնպիսի հոգեբանական հատկանիշի հետ, ինչպիսին է երեխյի կամքը, որի շրջանակներում երեխան գիտակցված կերպովկարգավորում է սեփական վարքը եւ գործունեությունը: Վերջիններս, իրենց հերթին, դրսեւորում են երեխայի կարողության մեջ՝ հաղթահարել դժվարությունները, որոնք հանդիպում են առաջադրված նպատակին հասնելու ճանապարհին:Նախադպրոցական տարիքում երեխան սովորաբար ունի դրական տրամադրություն շրջապատող իրականության հանդեպ սիրում է խաղալ և երևակայել: Ստեղծագործական ընդունակությունները հարկավոր է զարգացնել երեխաների մոտ սկսած ամենավաղ տարիքից:

գոյություն ունի կարծիք, որ ստեղծագործականությունը անձի բնածին հատկությունն է, որոշ երեխաների մոտ այն առկա է, որոշների մոտ՝ ոչ: Սակայն, բազմաթիվ հոգեբանական եւ մանկավարժական հետազոտությունների արդյունքում պարզ է դարձել, որ բնածին կարող են լինել միայն ստեղծագործականության հակումները: Որպեսզի դրանք դառնան

ստեղծագործական մոտեցումներ եւ ճկուն միտք, այդ հակումները պետք է մշտապես զարգացնել:
Տվյալ խնդրի շուրջ առկա որոշ գրական աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ստեղծագործականության խնդիրը տարբեր կերպ է մեկնաբանվում տարբեր հեղինակների, մասնագետների կողմից: Այսպես օրինակ, Ե. Տունիկը, ով զբաղվել է Է. Տրրնսի գիտական հայացքների խորին ուսումնասիրմամբ, ըստ վերջինիս հհայեցակարգի մեկնաբանում է ստեղծագործականյունը, որպես անձի ընդունակություն, որը մշտապես գտնվում է զարգացման գորշընթացում եւ կախված է բազմաթիվ ներքինեւ արտաքին պայմաններից, գործոններից3:
Հեղինակն առանձնացնում է ստեղծագործականության հետեւյալ չափանիշները.

- ➢ Մտքի սահունություն
- ➢ Մտքի ճկունություն
- ➢ Մտքի օրիգինալություն /յուրօրինակություն
- ➢ Մտքի մշակվածություն

Ն. Լեյտեսը նշում էր, որ ստեղծագործականությունը հզոր գործոն է հանդիսանում երեխայի զարգացման գործընթացում, որով բնութագրվում է տվյալ անձի պատրաստակամությունը փոխելու, հրաժարվելու կարծրատիպերից, ազդելու շրջակա իրականության վրա:
Այսպիսով, ստեղծագործականությունը սահմանվում է, որպես անձի ընդունակություն ծնելու նոր գաղափարներ գործունեության այս կամ այն ոլորտում, որոնք կնպաստեն առաջադրված խնդիրների էլ ավելի արդյունավետ լուծմանը: Այս ընդունակությունը կարող է արտահայտվել աձի մտածողության, ընկալման, երեւակայության, էմոցիաների, ինչպես նաեւ իր գործունեության արդյունքների մեջ:
Հայտնի են նաեւ ստեղծագործականության եւ ինքնուրույնության որոշ տարիքային առանձնահատկություններ: Այսպես, օրինակ, Ա. Բելոուսովան կարծում է, որ վաղ մանկական տարիքում ստեղծագործականությն խթանման վրա մեծապես ազդում են էմոցիաները:
Սակայն ստեղծագործական գործընթացի կարգավորման զգացմունքային, էմոցիոնալ հիմքի առկայությունը դեռեւս չի սպառում այս ֆենոմենի զարգացման մեխանիզմը երեխաների մոտ: Գոյություն ունեն նոր գաղափարների ստեղծման նաեւ այլ տեխնոլոգիաներ: Օրինակ, զարգացնող ուսումնառության հայեցակարգում ստեղծագործականգործընթացը կապվում է տեսական մտածողության հետ:
Նախադպրոցականի ստեղծագործականության խթանման գործու կարեւոր նախապայման է մանկավարժի ներազդեցությունը նրանց մտածողության գործընթացի վրա:
Այսպիսով, ստեղծագործականությունը երեխայի ներքին ակտիվությունն է, որը կապված է նրա հետաքրքրությունների, բնավորության եւ անձի առանձնահատկությունների, մտածողության առանձնահատկությունների հետ:

Ստեղծագործականությունը զարգացնում է գեղագիտական ճաշակ,քննադատական ,համեմատական,ճանաչողական,կարողություններ, պատասխանատվության,զգացում։Դրա համար այս կարողությունը պետք ձևավորել մանկապարտեցի տարիքից։Ստդղծագործականությունը երեխային հնարավորություն է տալիս ստեղծել նորը,յուրահատուկը՝հետագայում զարգացնելու նրա ունակությունները գիտության,տեխնիկայի ,արվեստի ոլորտներում,նույնիսկ առօրյա կրանքում։Ստեղծագործական գործունեությանն անհրաժեշտ բաղադրիչն ու հիմքը ստեղծագործական երևակայությունն է։Դրա համար մանկապարտեզում պետք է մեծ ուշադրություն դարձնել այս բաղադրիբի բնականոն զարգացմանը։Այս կարողունակության զարգացմանը. Նպաստում են խաղային տեխնոլոգիաները։Այդ խաղերին բնորոշ առանձնահատկությունը կայանում է,որ խաղային խնդիրը լուծելու համար երեխայից պահանջվում է հնարավորություն,ստեղծագործական մտածողություն,ինքնադաստիարկություն դաստիարակը կարող է տանել տարաբնույթ աշխատանքներ՝

- Բացահայտել երեխայի ստեղծագործական ներուժը
- Ուղղորդել և ծանոթացնել երեխային աշխատանքի կազնակերպման ձևերին
- Խրախուսել ,մոտիվացնել գնահատել երեխային կատարած աշխատանքի համար
- Ապահովվել՝բարոյահոգեբանական և բարեկամական կայուն մթնոլորտ սաներին պետք է տալ հմարավորություն ընկերների հետ համատեղ աշխատելու և ստեղծագործելու

Այսւիսի աշխասանքների արդյունքում պարապմունքը վերջիններիս համար դառնում է հրապուրիչ,շատ հետաքրքիր,նրանք սիրով են մասնակցում դրանց,ոմանք նաև սովորեցնում։Այդ ամենի արդյունքում զարգանում է սովորել սովորելու կարողությունը։Սաները կկարողանան ճիշտ դրսևորել իրենց կյանքի տարբեր իրավիճակներում,կհասկանան իմացածի և չիմացածի սահմանները

Այս սկզբունքները նպաստում են ոչ միայն երեխայի ստեղծագործականության զարգացմանը,թույլ են տալիս նոր կյանք մտնող և կյանքը չանաչող անհատին լիարժեք շփման մեջ,այլև դրանք խթան են հանդիսանում սաների նախաձեռնողականության,ինքնուրույն աշխատելու համար

Նախաձեռնողահանությունը առավել ակտիվ ձևավորվում է նախադպրոցական տարիքում՝ սկսած երեք տարվա ճգնաժամից և ,,Ես ինքս՝ երեխայի առաջացումից ամենաբարենպաստ շրջանը 3 ից 5 տարեկանն է։Այս տարիքում երեխաների նախաձեռնողականությունը դրսևորվում է տարբեր խաղերի և ֆիզիկական վարժությունների միջոցով։Մանկության տարիներին ազատ և դերային առաջադրմամբ երեխային կարելի է ուղղորդել հետևեք նրա ընտրված սկզբնական քայլերին,լավ սովորեցնել պատասխանատվության կրել սեփական ընտրության համար,միջանձնային շփման մեջ լինել հանդուրժող։

Հետաքրքրասիրության բավարարումը նույնպես կարևոր նախապայման է,որ նախադպրոցականը լինի ինքնուրույն։

Այսպես է բավարարում իր շփման կարիքը համալրում է գիտելիքների պաշար,բառային պաշարը,արլ խոսքով՝ նախադպրոցականի հետաքրքրությունների բավարարումը վերջինիս իմացական ոլորտը անուցող աղբյուր է ։

Խոսքի զարգացման,սոցիալականացման մի շարք կենսական նշանակության կարողունակությունների զարգացման համար նախադպրոցական տարիքը անփոխարիներլի ժամանակաշրջան է։Այս տարիքում երեխան յուրացնում է հազարավոր նոր բառեր,արտահաձտություններ և դարձվածքներ,Երեխան սովորում է նաև վարքագծի և վարվեցողության կանոնները,ճանաչում իրեն շրջապատող իրերը,առարկաներն ու երևույթները։Այս հանգամանքը պետք է հաշվի առնել և նախադպրոցական շրջանը դարձնել երեխայի խոսքի զարգացման հիմնական օղակ,նրա մեջ լեզվազգացողության արթնացման և մշակման,մայրենի լեզվի հիմնական բառային ֆոնդի ուսուցման ժամանակաշրջան։

Երեխան տանը բակում հարազատների հետ շփման ժամանակ սկսում է երկխոսել գտնել իրեն հետաքրքրող միջավայրը ու թեմա,որպեսզի բավարարի իր տարիքին

բնորոշ հետաքրքրասիրությունը։Շատ կարևոր է,որ երեխաները ավելի շատ խոսեն,արտահայտեն իրենց մտքերը, Հետաքրքրվեն հարցեր տան արտահայտեն իրենց կարծիքը։Դաստիարակը պետք է կարողանա պահը որսա և ակիվությամբ հաջորդի սաների գործունեություններին,թույլ տա,որ վերջիններս կաճախակի ինքնուրույն լինեն,նախաձեռնեն խաղեր,կիսվեն իրենց մտահոգություններով։Դաստիարակի մտահոգությունները պետք է լինի հստակ՝աջակցել և խրախուսել երեխայի նախաձեռնողականությունը հուզական հաղորդակցության մեջ ու միշտ արձագանքել Երեխայի՝ ընկերական ուշադրություն,աջակցություն ,ջերմություն ստանալու ցանկություն

Երեխաների նախաձեռնողականության 5 ուղղություն կա՝

- Ստեղծագործական նախաձեռնողականություն
- Նախաձեռնողականությունը որպես նպատակադրում և կամային ջանք
- Ճանաչողական մախաձեռնություն-հետաքրքրասիրություն
- Հաղիրդակցման նախաձեռնություն
- Շարժողական նախաձեռնություն։

Ստեղծագործական նախաձեռնողականության՝պատմվածքի վրա հիմնված խաղի մեջ ներգրավելը որպես երեխայի հիմնական ստեղծագործական գործունեություն,որտեզ զարգանում է Երևակայությունը և երևակայական մտածողությունը։

Նախաձեռնությունը որպես նպատակադրում կամային ջանք՝տարբեր տեսակի արդյունավետ գործունեության մեջ ներգրավածության՝ նկարչության մոդելավորում ճանաչողական նախաձեռնություն-հետաքրքրասիրության փորձերի մեջ ներգրավածություն,պարզ ճանաչողական և հետազոտական գործունեության որտեզ զարգացած է տարածական-ժամանակային պատճառահետևանքային և ընդհանուր հարաբերությունների հաստատելու ունակությունը։Անհրաժեշտ պայմանների ստեղծում երեխաների համար որոշումներ կայացնելու արտահայտելու իրենց զգացմունքները ու մտքերը։Հաղորդակցման նախաձեռնություն՝երեխայի ներգրավածությունը հասակակիցների հետ շփման մեջ խոսքի հաղորդակցման

գործառույթ։Շարժողական նախաձեռնություն՝երեխայի շարժողական գործունեության տարբեր ձևերի դիտարկում ։Կրտսեր,միջին ավագ նախադպրոցակապ տարիքի երեխաների շարժիչ գործունեության մեջ ինքնուրույն ընտրության պայմանների ստդղծում(էջ 106)

Այսպիսով նախաձեռնողականության դրսևորվամբ է սկսում ձևավորվել պատասխապատվության և այստեղ շատ կարևոր է երեխաձի հետ քննարկել նրա տարբերակները,որոնք դեռ կարելի է դիտարկել։

Բավականին արդյունավետ է նաև ուսուցման գործնական մեթոդները։ Ուսուցման գործնական մեթոդների խմբին են դասվում տարատեսակ վարժությունները փորձերը Հետազոտությունները և մոդելավորումը։Ակտիվ ուսուցման մեթոդները նպաաստում են երեխաների ազատ և ինքնուրույն մտածելու սեփական կարծիքը հայտնելու,պատասխանատու որոշումներ կայացնելու,ընտրություն կատարելու և մտությունների զարգացմանը ,ճանաչողական գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը։Այդ մեթոդները զույգերով,խմբով մտավոր աշխատանքի եղանակներն են ուղղված համատեղ որոնումներին ու մտորումներին,դրանց քննարկմանն,ընդհանուր որոշումների կայացման ու իրագործմանը։Ուսուցման փողգործուն մեթոդները համապատասխանում են երեխայակենտրոն ուսուցման սկզբունքներին և շատ արդյունավետ են։Փողգործուն մեթոդները բացառում են որևէ մդթոդի առաջնայնությունը,գերակայուցյունը,ինչպես նաև մեկ մեթոդի գերակշռությունը մյուսների նկատմամբ։

Փաստորեն կարելի է փաստել որ ուսուցման երեխայակենտրոն մոտեցումը բավականին խոսուն է ու դաստիարակին հնարավորություն է տալիս լիել ուղղորդող-ուսուցանողի դերում՝խրախուսելով երեխայի ինքնուրույն ձեռքբերումները։Փոխգործուն մեթոդների առանձնահատկություններն են՝երեխայի իմացական գործընթացների կազմակերպումը,հետաքրքրությունների բացահայտումը,հաղորդակցման ունակությունների ձևավորումը տրամաբանական մտածողության զարգացումը,ինքնուրույնության խրախուսումը վերլուծական կարողությունների Ձևավորումը։Դաստիարակի խնդիրն է ընդհանուր սակմանված մեթոդը հարմարեցնել կոնկրետ իրավիճակին իր ունեցած

մեթոդական զինանոցից ընտրել համապատասխան մեթոդը՝ ելնելով իրականացվող աշխատանքի նպատակներից։

Այսպիսով նոր մեթոդներից կիրառությամբ աշխատանքը թույլ կտա,որ երեխան նախադպրոցական հաստատությունից դուրս՝առանց դաստիարակի միջամտության ու անմիջական օգնության,Ինքնաարտահայտման,ինքնադրսևորման դժվարություններ չունենա,ինտեգրվի միջավայրին,ինքնուրույն Նկարի,ծեփի,հաշվի,արտահայտի իր հույզերը ու զգացողությունները։Սրանք նախադպրոցականի առաջին հաղթանակներն են,որոնց հենքի վրա պետք է ձևավորվի ապագա դպրոցականը,անհատը և քաղաքային։

Գլուխ 2

Ստեղծագործական և դիդակտիկ խաղերը՝ավագ նախադպրոցականի ավագ նախադպրոցականի հաղորդակցման կարողությունների և ստեղծագործական ունակությունների զարգացման միջոցով

Նախադպրոցական տարիքի երեխայի համար ստեղծագործական ունակություններն են,որոնք որոշում են ցանկացած ստեղծագործական գործունեության իրականացման հաջողությունը։Ստեղծագործությունը Կարելի է անվանել նախադպրոցական կրթության շատ հատկությունների միաձուլումը։Այս բոլոր հատկությունների հիմքը երևակայությունն է և ստեղծագործական մտածողությունը,որի զարգացումը հանգեցնում է Նախադպրոցական տարիքում ստեղծագործական ունակությունների բարելավմանը։

Նախադպրոցականների ստեղծագործական ունակությունների համար բավական արդյունավետ միջոցներ և մոտեցումներ կան նախադպրոցական մանկավարժական պրակտիկայում,որոնցից կարելի է առանձնացնել խաղային տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական պարապմունքների ժամանակ ։ Խաղը կարզևոր դեր ունի նախադպրոցականի տարիքի ցարգացման,դաստիարակության աշխարհընկալման գործում։Խաղի բովանդակությունը ճիշտ օգտագործելու դեպքում դաստիարակը կարող է հասնել երեխայի մեջ դրական և կարևոր որակների և հատկությունների Ձևավորմանն ու դրանց հետագա զարգացմանը։Խաղը երեխայի միակ և ամենասիրած զբաղմունքն է։Երեխան խաղում է միշտ և ցանկացած պահին։Այն թույլ է տալիս բավարարել շաս պահանջներ՝օրինակ հետազոտության զվարճանքի ինքնահաստատման,հավաքված էներգիայի օգտագործումն և այլն։ Խաղի օգնությամբ երեխան ձեռք է բերում այնպիսի որակներ,ինչպիսիք են շփվողականությունը ,նախաձեռնությունը,իր գործողությունները հասակակիցների գործողությունների հետ կորդինացնելու ունակությունը։Խաղերի միջոցով երեխաները փորձում են արտահայտել իրենց զգացմունքները,բացահայտելու իրենց ներքին աշխարհը,լուծել ներքին կոնֆլիկտները ,բարձրացնել ինքնագնահատականը։Խաղային գործունեությունը

նպաստում է կամային հիշողության զարգացմանը։Խաղի պայմաններում երեխաները ավելի են կենտրոնանում և ավելի շատ գիտելիքներ մտապահում,քան գործունեության որևէ այլ տեսակի ժամանակ։Խաղով ուղեկցող ուսումնական պարապմունքների ընթացքում,Խաղի օգնությամբ կարելի է զարգացնել նախադպրոցականի կապակցված խոսքը,պատկերավոր և քննադատական մտածողությունը ,ինքնուրույնությունը,երևակայությունը,Խաղային գործունեության մանկավարժական գործունեությունը երեխաների կյանքում կարևոր են Ժ.Ռուսոն,Ա.Կոմենսկին.Ֆ.Ֆրոյբելը,Խաղի դերը և նշանակությունը նախադպրոցականի կյանքում դիտվում են որպես երեխայի համակողմանի զարգացման,ինքնահաէստացման,կարևորագույն միջոց,որը նաև բավականին լավ միջոց է խոսքը լավ զարգացնելու համար։

Հոգեբաններ Լ.Ս Վիգոտսկին,Ա.Լ Լեոնտևը,Ա.Ռ Լուտինան և ուրիշներ ապացուցել են,որ երեխայի բոլոր գործընթացները՝ հիշողություն,ուշադրություն,մտածողություն,ըմբռնում ձևավորում են խոսքի միջոցով։Ավագ նախադպրոցական տարիքում կարևոր է հատկապես կապակցված խոսքի զարգացումը զրույցների միջոցով։Կապակցված խոսքի մշակման կարևորագույն խնդիրն է Երկխոսություն՝զրույցը։Երկխոսության մեջ մտնելը պահանջում է այնպիսի բարդ կարողություններ,ինչպիսիք են լսել և ճիշտ հասկանալ զրուցակցի արտահայտած մտքերը սեփական դատողությունները։Արտահայտել Ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ,պահպանեք որոշակի հուզական տոն,լսել սեփական խոսքը և այլն։

Անհրաժեշտ է ամրապնել երեխայի մեջ ընդհանուր զրույցին մասնակցելու ունակությունը,զրուցակցին ուշադիր լսելու,նրան չընդհատելու,զրույցից չշեղվելու և այլ կաէողություններ ։Հատուկ ուշադրություն պետք է դարձնել հարցեր Ձևակերպելու և դրանք երեխային ասելու հմտության մշակմանը։

Երեխաները պետք է կարողանան համապատասխանաբար պատասխաններ ձևակերպել լրացնել,ուղղել զրուցակցին,համադրել սեփական տետսակետը զրուցակցի տեսակեի հետ և այլն։Հարկավոր է կազմակերպել երեխայի տեսադաշտից բացակայող իրերի մասին,իմչպես նաև խաղերի,կարդացված

գրքերի,դիտած մուլտֆիլմների շուրջ բովանդակալից զրույցներ։Օրինակ խնդրեք երեխային,որ պատմի թե ինչ է տեսեք կենդանաբանական այգում կամ երեկ քնելու առաջ մայրիկն ի՞նչ հեքիաթ է կարդացել և այլն։Դաստիարակի ղեկավարությամբ երեխան իր հասակակիցների հետ քննարկում է մանկական պատմվածքների կամ հերոսների արարքները։Այս ամենը նպաստում է երեխայի ճանաչողական ընդունակությունների, խոսքի և պատկերացումների զարգացմանը։Խոսքով սեփական զգացմունքներն արտահայտելու կարողությունը, դիմացինին հասկանալու, կատարվածի մասին վերաբերմունք, դրսևորելու ունակությունը, հիմք են ծառայում հասակակիցների շրջապատում ճիշտ հաղորդակցվելու և փոխհամաձայնության գալու համար։Մանկական շփումների, գործառույթների, մտքերի ու զգացմունքների համաձայնության կարողությունը երեխայի համագործակցությունը դարձնում է առավել կայուն և հետաքրքիր։Այն նպաստում է երեխայի վարքագծի կայունացմանը և միջանձնային հարաբերությունների ձևավորմանը։ Հետաքրքիր խաղային մեթոդ է կիսատ նախադասությունների շարունակությունը։Դաստիարակը որևէ հետաքրքրական միտք է ասում, սակայն թողնում է անավարտ։ Երեխան իր բառերով շարունակում է միտքը։Հնչում են մի քանի տարբերակներ։Կարելի է նման կերպ երեխաների հետ որևէ պատմություն հորինել, որպեսզի երեխայի համար ավելի պատկերավոր դառնան այն, նոր բառերը, որոնք աշխատանքի արդյունքում կսովորի։Կարելի է կիրառել նաև ստեղծագործունեության և խոսքը զարգացնող խաղ, խաղալիքների օգնությամբ։Խաղի համար մեզ անհրաժեշտ կլինի մրգերի կամ բանջարեղենների, կամ որևէ խառը խաղալիքներ, պարկ։Երեխայի փորձում ենք խաղալ «հրաշալի պարկ» խաղը ՝ նախապես երեխային տալիս ենք օրերը հերթով շոշափի, նկարագրի յուրաքանչյուր առարկայի արտաքին առանձնահատկությունները և դնի պարկի մեջ։Բոլոր առարկաները հատ-հատ նկարագրելուց ու պարկի մեջ գցելուց հետո պարկը լավ խառնում ենք և առաջարկում երեխային ձեռքը մտցնել պարկի մեջ, հանել մեկ առարկա և աչքերը փակ փորձել, նկարագրել և հասկանալ ՝ որ առարկան է իր ձեռքում։Այս խաղը ևս զարգացնում է երեխայի մի շարք հոգեկան գործընթացներ, հատկապես տաք տիլային զգացողությունը, սոսքը, ուշադրության

կենտրոնացումը, մանր մոտորիկան և այլն։Դաստիարակը պետք է կարողանա իր սաները մեջ խթանել ստեղծագործական ունակությունները, թույլ տալ ինքնարտահայտման, սեփական կարծիքն անկաշկանդ արտահայտելու, ինքնուրույն գործունեություն կատարելու։Սոսքի զարգացման, մաթեմատիկայի, նկարչության, երաժշտության պարապմունքների ժամանակ պետք է խրախուսել երեխաների ինքնուրույն գործունեությունը, քանի որ հենց նման կերպ կարելի ա հիմք նախապատրաստել, որ երեխան անցում անցնի հնարավոր դժվարությունների միջով, տեսնի իրեն շրջապատող գեղագիտությունը, ստեղծագործաբար մոտենա իր աշխատանքին։Կերպարվեստի պարապմունքի շրջանակներում կարելի է խնդրել, որ երեխան պատմի իր նկարի մասին, հիմնավորի գույների ընտրությունը, բնության գրկում զբոսանքներից հետո պատմի իր զգացողությունների նախընտրելի եղանակի մասին։ Նախադպրոցական տարիքի երեխային հարկավոր է անդադար խոսեցնել, հարցեր տալ, խնդրել, որ երկխոսի, կիսվի իր մտածմունքներով, իր բառերով վերարտադրի հեքիաթը, դուրս նայի պատուհանից ու պատմի այն ինչ տեսնում է, առանց դաստիարակի օգնությամբ նկարի, ծեփի, աշխատի կոնստրուկտորներով։Նախադպրոցական կրթության համակարգը պետք է ուղղված լինի ոչ միայն գիտելիքներով հարուստ մտավոր գործունեության ընդունակ երեխայի զարգացմանը այլև նրա անձնային հիմնարար որակների և սոցիալական հմտությունների զարգացմանը։Նախադպրոցական տարիքին առաջին հերթին երեխայի անձնավորության կայացման կարևորագույն շրջանն է։Այսպիսով կարող ենք արձանագրել, որ նախադպրոցականի համար շատ կարևոր ինքնուրույնության մթնոլորտը, որտեղ նա կարող է ինքնուրույն գործել, որոշումներ կայացնել, համագործակցել ընկերների հետ, համատեղ աշխատանքի միջոցով ունենալ հաղթանակներ։Այս համատեքստում առանձնահատուկ կարևորվում է նախադպրոցականի, կրթության ոլորտի, մանկավարժի դերը, որը կոչված է իրականացնելու մի շարք կարևորագույն մասնագիտական գործառույթներ։Արդունավետ ու դրական աշխատանքի համար մանկավարժ-դաստիարակը պետք է ունենա մասնագիտական ու մարդկային բարձր որակներ,

սիրի երեխաներին, հաշվի առնի նրանց «ես«-ը։ Թերևս այս ամենի ամբողջությունը հաշվի առնելով ՝ մանկավարժ-դաստիարակն իր աշխատանքն իրականացնելիս պետք է դրսևորի ՝

- Երեխաների հետ տարբերակված աշխատանք կատարելու կարողություն։
- Անհատական աշխատանք երեխայի հետ։
- Աշխատանք ծնողի հետ։
- Նախադպրոցական հաստատության, երեխա ծնող կապի անքակտելի կապի բնականոն ապահովում և համագործակցության կարևորում։

Ընդհանուր զարգացման մակարդակի մակարդակի երեխաների առանձնահատկությունների գնահատման կարողություն։

- Երեխաների հետ անկաշկանդ շփվելու կարողություն։
- Երեխաների ստեղծագործ մտածողությունը խթանելու կարողությունը։
- Համընդհանուր բարեվարքության կանոնների ուսուցումը կազմակերպելու և դրանք վերահսկելու կարողություն։
- Բանավոր խոսքի սաղմնավորման և հետագա զարգացման փուլերում այն խրախուսելու, զարգացնելու կարողությունը։
- Համակարգված աշխատելու կարողություն։
- Մի շարք մեթոդներ ու հնարներ գործնականում կիրառելու կարողություն։
- Ինքնազարգացում, ինքնակրթություն, բաց թողումների շտկում։

Այսպիսով, մանկավարժ-դաստիարակը պետք ա փորձի ֆիզիկական, գեղագիտական, բարոյական ու մտավոր դաստիարակության առանցքում դնել երեխային ՝ հաշվի առնելով վերջինիս անհատական պահանջմունքները, գիտակցական մակարդակը, կարողությունները, հմտությունները։Երեխաները տարբեր են, տարբեր են նրանց ընկալումները, ցանկությունները, երազանքներն ու վարքը, սակայն նրանք բոլորն ունեն պահանջմունքներ, որոնք հաճախ տարբեր են, ուստի և յուրաքանչյուրի հետ անհրաժեշտ է տանել անհատական աշխատանք, որպեսզի երեխան ունենա բնականոն զարգացում։Պետք է փորձել ճանաչել նրանց, հասկանալ, թե ո՞ր կարողությունն է նրանց համար դժվար հասանելի ու աշխատել հենց այդ ուղղությամբ։

Գործնական մաս

Դիտարկենք մի քանի ցուցադրական պարապմունքի օրինակ,որտեղ օգտվել եմ փոխներգործուն մեթոդներից՝ թույլ տալով,որ երեխաներն աշխատեն թիմերով:Նմանօրինակ մեթոդներ հաճախակի եմ կիրառում իմ մանկավարժական գործունեության ընթացքում՝նպատակ ունենալով զարգացնել սաների ստեղծագործական ունակությունները, ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը:Հաշվել եմ նաև,որ սույն ցուցադրական դասին ներկա են եղել նաև նախադպրոցական հաստատության ավագ մանկավարժի և դաստիարակի օգնականը:նրանց կարծիքով պարապմունքն արդյունավետ էր,և բովանդակալից,բոլոր սաները ցուցաբերում էին ակտիվ մասնակցություն,դրսևորում էին նախաձեռնողականություն և հնարավորին չափ ինքնուրույնություն:

Ավագ մանկավարժը ընդգծեց այն մասին,որ բոլոր երեխաները ցուցաբերում էին ակտիվ մասնակցություն,դրսևորում նախաձեռնողականության և հնարավորին չափ ինքնուրույնություն:Որևէ երեխա պասիվ ու ստվերված:Պարապմունքը ընթացավ Խ.Ի.Կ համակարգով:Աշխատանքի կազմակերպման պայմաններից է բարյացակամ մթնոլորտի ստեղծումը:

Գործնակարգ պարապմունք <<Խիկ>> համակարգի կիրառությամբ

Թեմա-<<Չարի վերջ հեքիաթի ընթերցումը>>

Նպատակներ

- Սաներին փոխանցել հեքիաթի բովանդակությունը,տալ գաղափար չարի ու բարու մասին,բացատրել հեքիաթում առկա անծանոթ բառերը:
- Սաների մոտ առաջացնել հետաքրքրություն հեքիաթներ ունկնդրելու նկատմամբ:
- Գործնական աշխատանքի օգնությամբ ձևավորել թիմում աշխատելու հմտություն
- Դաստիարակել հարգանք մեծերի նկատմամբ
- Զարգացնել մանր մոտորիկան,նկարելու, ծեփելու, ունակությունները
- Խթանել երևակայությունը,ինքնուրույնությունն և նախաձեռնությունը:

- Նկատել սովորողների ստեղծագործական մտածողության զարգացումը։

Աշխատանքի ընթացքը

Խթանման փուլ։ Այս փուլում ընթերցել <<Չարի վերջը>> հեքիաթը՝կիրառելով ստեղծագործական մտածողությունն ու երևակայությունն զարգացնող մի հնար։ Հեքիաթի դադարներով ընթերցումը բավականին հետաքրքիր հնար է նախադպրոցականի հետաքրքրությունն ակտիվացնելու,նրան մտածել սովորեցնելու տեսանկյունից ՝Հիշում է հարցը՝ ի՞նչ ես կարծում,ի՞նչ կլինի հետո ։Երեխան սկսում է ստեղծագործել երևակայել,հորինել,իսկ արդյունքում զարգանում է նրա ստեղծագործական մտածողությունը։Երբ երեխան սկսում է հեքիաթը պատմել իր տարբերակով,ապա պետք է նրան ուղղել։Այսպես,նախադպրոցականի բառային պաշարն է զարցանում,նա սկսում է երևակայական հերոսներ հորինել։Այս եղանակով հեքիաթի ընթերցումից հետո կարելի է կազմակերպել խմբային քննարկում։Քննարկումն ակտիվացնել հուշող,ուղղորդող հարցադրումների միջոցով։

Հարցադրումների օրինակներ՝

- Ի՞նչու կկուն հավատաց աղվեսին։
- Աղվեսը այդյոք ագահ էր ու չար։
- Ո՞վ էր հեքիաթի ամենաբարի հերոսը ։
- Իսկ դու ինչպե՞ս կոգնեիր կկվին։

Իմաստի ընկալման փուլ

Գրատախտակից փակցնել հեքիաթի երեք հերոսներին և երեխաներին բաժանել հատկանշավորելու համար։Հաջորդիվ խմբերը կներկայացնեն իրենց տեսակետերը։

Այս ընթացքում հետևել սաների խոսքեն,հարկ եղած դեպքում ուղղելով ու շտկելով նրանց։

Հաջորդիվ,հոգնածություն.լատվածություն թոթափելու համար երեխաները կպարեն,իսկ ընթացքում մոնիտորի վրա ցուցադրել նախօրոք պատրաստած սծտեսասահիկը՝հեքիաթի գլխավոր հերոսների նկարներով։

Կշռադատման փուլ

Այս հատվածում կրկին փոքրիկներին բաժանել 3 խմբի՝տալով առաջադրանքներ։

Առաջադրանքի օրինակներ.

խումբը-պատրաստել խմբային նկար <<Չարի վերջը>> նկարի շուրջ։

խումբ պատրաստել ապլիկացիա <<Չարի վերջը>> հեքիաթի շուրջ

խումբ-Ծեփել <<Չարի վերջը>> հեքիաթի հերոսներին։

Աշխատանքները հավաքել և քննարկումով ցուցադրել երեխաներին։

Եզրակացություն

Աշխատության թեման անսպառ ուսումնասիրության և վերլուծության երկարատև աշխատանք է պահանջում։Սակայն մի բան հստակ է,եթե մենք նպատակ ենք դնում զարգացնել նախադպրոցականի խոսքը ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը,ապա անհրաժեշտ է հաշվի առնել,որ որոշակի կոնկրետ գործում նա ունի իր հետաքրքրությունները,առանձնահատկությունները։ Երեխայի այդ պահանջմունքը բավարարելու համար դասցիարակը պետք է կուտակի նորանոր հմտություններ ու կարողություններ,որպեսզի արդյունավետ աշխատանք տանի։Դաստիարակը պետք է երեխաների շփման համար ստեղծի հարմարավետ պայմաններ որպեսզի նրանք մեծանան նախաձեռնող,մտածող, ստեղծագործող և ինքնուրույն։

Այսպիսով ինքնուրույնությունը նախաձեռնողականությունը և ստեղծագործական ունակությունները,հատկանիշներ են,որոնք պետք է անընդհատ զարգացնել մանկապարտեզի սաների մոտ։Դաստիարակի համար առաջնահերթ խնդիր է ներդաշնակ զարգացած անհատականության ձևավորումը։Եթե երեխան օժտված է ինքնուրույնությամբ և ստեղծագործականությամբ կարելի է ասել, որ արդեն նաև նախաձեռնող է։

Բարոյահոգեբանական կայուն մթնոլորտը թույլ կտա,որ երեխան ժամանակի ընթացքում ինտեգրվի հասարակության և նախաձեռնողի դերում լինի,ցանկանա սովորել ու իր սովորածը կիրառել նախադպրոցական հաստատությունից դուրս։

Զբոսանքի,խաղի կամ ուսումնական պարապմունքների ժամամակ հարկավոր է,որ անդադար դաստիարակը զրուցի երեխայի հետ լսի նրա նտահոգությունները,պարզաբանելով այս կան այն երևույթի մասին ,նրանց հուզող Հարցերը։Այսպիսով դաստիարակը հիմք է նախապատրաստում,որ առաջիկայում

նախադպրոցականն ունենա առաջընթաց ու կարողանա ձևավորել կապակցված խոսքը,լինի ավելի ինքնուրույն ու կազնակերպված։

Օգտագործված գրականության ցանկ

աչատրյան Պ. Ինքնուրույնության և և ստեղծագործական կարողությունների զարգացում.Երևան 1974

ուփուզյան Ա. Հումանիտարական դաստիարակության խնդիրները։

որգոմյան Լ.Մանկավարժության ընդհանուր հիմունքները Երևան 2005թ

Բ. Էլկոնին <<Մանկավարժական հոգեբանություն>> 1960թ էջ 18

Վ

Ա Մարության,Ա.Մ Դալաքյան <<Նախադպրոցական Մանկավարժություն>>

Մկրտչյան Նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացման մեթոդիկա >> 2019թ

լոարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերուումմ կայլընտրանքային մեթոդներով Երևան 2018թ

ՀС Выготский-Мышление и речь Москва 1934

ևИ Яшина ,М.М Алексеева Теория и методика развития речь детей.

նախադպրոցական կրթության մասին>> Հ.Հ օրենք ։

Ի

ն

ք

ն

ո

ւ

ր

ո

ւ

յ

ն